

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 31 Մարտի, 2008

ՀՀԴ Իւտայի նահանգի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները հրաւիրուել եւ ներկայ եւն գտնուել ամերիկահայ System of a Down ջազային խմբի երգիչ եւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցով ամերիկեան պետական ու հասարակական շրջանակներում ջանքեր գործադրող Սերժ Թանգեանի համերգին, որը տեղի է ունեցել Մարտի 19-ին Իւտայի նահանգի Սոյտ Լէյկ Սիտի քաղաքում: «Հայ Դատի հետապնդման ուղղութեամբ իր կատարած ծառայութեամբ Սերժը ուշագրաւ օրինակ է հանդիսացել ամերիկահայ երիտասարդութեան համար թէ՛ Իւտայում եւ թէ՛ աշխարհով մէկ: Ցեղասպանութեան դէմ պայքարի հարցերում նա մեծ ոգեւորութեամբ ու նուիրումով եւ հանդիպում եւ իր կարծիքներն ու տեսակէտները կիսում մեզ հետ»,- ասել է համերգին ներկայ գտնուած Իւտայի հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Սարգիս Բէկիրեանը:



Հինգշաբթի, Մարտ 27-ի առաւօտեան ժամը 11-ին, Գլենդէլի Oakmont Country Club-ի սրահում տեղի է ունեցել «Գլենդէլի Գոհարներ» անուամբ պարգեւատրման 4-րդ ձեռնարկը, որի ընթացքում յատուկ մեծարանքի եւ արժանացել քաղաքի երեք կին գործիչներ՝ համայնքին բերած իրենց մարդասիրական երկարամեայ ծառայութեան համար: Միջոցառումը կազմակերպուել էր Գլենդէլի կանանց հարցերով ամերիկեան յանձնաժողովի կողմից: Պարգեւատրման արժանացած յիշեալ երեք կանանցից մէկը Հայ օգնութեան միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան փոխատենապետուհի Սեդա Խոճայեանն էր, որի գործունէութեան մասին դրուատանքով է անդրադարձել յիշեալ յանձնաժողովի անդամուհի Մարի Լըմէլը: Սեդա Խոճայեանը առաջին հայուհին է, որ արժանանում է սոյն գնահատանքին: Իրաքի մայրաքաղաք Բաղդադում ծնուած Սեդա Խոճայեանը իր բարձրագոյն կրթութիւնը ստացել է Միացեալ Նահանգներում, մասնագիտանալով տնտեսագիտութեան եւ հանրային վարչարարութեան բնագաւառներում: Անդամանկցելով Հայ օգնութեան միութեան Գլենդէլի «Սիփան» մասնաճիւղին, երկար տարիներ նա իր ծառայութիւնն է մատուցել ՀՀԿ-ի տեղական, շրջանային եւ միջազգային ծրագրերին: Յանձնաժողովի պարգեւներից բացի, յիշեալ երեք կանանց յանձնուել են նաեւ Լոս Անջելոսի քաղաքապետական խորհրդի գերատեսուչ Մայքըլ Անթոնովիչի, կոնգրեսականներ Լինդա Սանչէզի եւ Ադամ Շիֆի, նահանգային սենատոր Ջաք Սքաթի, նահանգային խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեանի յատուկ գնահատագրերը:



Պատմական հայ բնակավայրերի վերաբերեալ UCLA համալսարանի Հայոց արդի պատմութեան ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռիչըրդ Յովհաննէսեանի ջանքերով կազմակերպուած գիտաժողովների 18-րդը տեղի է ունեցել Փետրուարի 29-ին եւ Մարտ 1-ին, որը նուիրուած էր հիւսիսարեւելեան Միջերկրականի շրջանի, մասնաւորաբար Մուսա լեռան, Քեսապի եւ Չորք Մարզպանի հայկական համայնքներին: Գիտաժողովի բացման նիստը տեղի է ունեցել Բըրբանք քաղաքի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան թեմի առաջնորդարանի սրահում, իսկ յաջորդ նիստերը կայացել են UCLA համալսարանում: Գիտաժողովում ելոյթ են ունեցել ինչպէս Հայաստանի, այնպէս էլ Սփիւռքի հայ պատմաբաններ, ինչպէս նաեւ ամերիկեան ու եւրոպական համալսարանների օտարերկրացի դասախօսներ:



Մարտի 25-ին Հայ օգնութեան միութեան կազմակերպութեամբ տեղի է ունեցել յատուկ միջոցառում, որի ընթացքում հոգեբաններ Սարգիս Արեւեանը եւ Իդա Քարայեանը խօսել են այն հոգեվիճակների մասին, որոնք դիմակայում են Միացեալ Նահանգներ արտագաղթած հայ ընտանիքները: Դոկտոր Սարգիս Արեւեանը իր ելոյթում անդրադարձել է

արտագաղթածներից շատերի մօտ առկայ վախի եւ ընկճուածութեան իրավիճակներին:
Իսկ դոկտոր Իդա Քարայեանը խօսել է արտագաղթի դժուարութիւնների եւ այն
փոփոխութիւնների մասին, որոնք պարտադրուած դիմակայում են գաղթականները:
Միջոցառմանը ներկայ են եղել ինչպէս ԶՕՄ-ի, այնպէս էլ եւ համայնքի անդամներ:



Կիրակի, Մարտի 30-ին Լոս Փարզէս անտառատարածքում տեղի է ունեցել ԶՍԸՄ-ի նոր
ճամբարի բացման հանդիսաւոր արարողութիւնը, որին ներկայ են գտնուել թեմակալ
առաջնորդ Մուշեղ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կենտրոնական Կոմիտէի եւ շրջանի ազգային մարմինների ներկայացուցիչները: 26 ակր
տարածութեամբ սոյն ճամբարը ծառայելու է ԶՍԸՄ-ի Միացեալ Նահանգների արեւմտեան
շրջանի շուրջ 8300 անդամներին, մասնաւորաբար սկաուտների աշխատանքներին:

**Այս լուրերը տրամադրուած են
ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կենտրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել:**